ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 25.07.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/25

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.06.2017թ. թիվ 03/26-1/11281-17 գրությամբ «Մեծ Հիմք» Ա/Կ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Արարատի մարզպետարանի 14.06.2017թ. թիվ 26348-17 գրության հիման վրա, 21.06.2017թ. թիվ 03/26-1/11281-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Մեծ Հիմք» Ա/Կ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Մեծ Հիմք» Ա/Կ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Մեծ Հիմք» Ա/Կ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 27.06.2017թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է, որ «Մեծ Հիմք» Ա/Կ-ն մասնակցել է ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից կազմակերպված «ԱՄ-ԲԸՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգին, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Մեծ Հիմք» Ա/Կ-ի հայտը մերժվել է, քանի որ վերջինս քաղաքաշինության բնագավառում տրանսպորտային լիցենզիա չունի:

Ամփոփելով վերոգրյալը, «Մեծ Հիմք» Ա/Կ-ի տնօրենը հայտնել է, որ Ընկերությունը, մասնակցելով Ընթացակարգին, չի նկատել այն փաստը, որ Ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնով պահանջվել է տրանսպորտային լիցենզիայի առկայություն, ուստի գտնում է, որ Պատվիրատուն, մերժելով Ընկերության հայտը՝ թիվ 2-րդ չափաբաժնի մասով, գործել է իրավաչափ:

3. ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ Արարատի մարզպետարանը 14.06.2017թ. թիվ 26348-17 գրությամբ ներկայացրել է ՀՀ Արարատի մարզպետարանի կարիքների համար «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» աշխատանքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱՄ-ԲԸՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել, որ ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից կազմակերպված «ԱՄ-ԲԸՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգին բոլոր չափաբաժիններով մասնակցության հայտ է ներկայացրել «Մեծ հիմք» Ա/Կ-ն: Հրավերի 2-րդ չափաբաժնով պահանջվել է, որ մասնակիցը պետք է ունենա նաև տրանսպորտային լիցենզիա:

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից տրված տեղեկության համաձայն՝ «Մեծ հիմք» Ա/Կ-ն հայտը ներկայացնելու պահի դրությամբ լիցենզավորված է և ունեցել է քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման գործող լիցենզիա՝ ըստ բնակելի, հասարակական և արտադրական, հիդրոտեխնիկական և էներգետիկ ոլորտների:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 27.06.2017թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2017/25 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2017/25 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Արարատի մարզպետարանի կարիքների համար «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՄ-ԲԸՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Մեծ հիմք» Ա/Կ-ն:

2. Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 1-ին կետը սահմանում է, որ սույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները.

ըստ «Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակում» հետևյալ ոլորտների՝

Չափաբաժինների համարները	Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).
1	2
1	«Բնակելի հասարակական և արտադրական» «հիդրոտեխնիկական» և «էներգետիկ»
2	«Բնակելի հասարակական և արտադրական» «հիդրոտեխնիկական», «էներգետիկ» և «տրանսպորտային»

3	«Բնակելի հասարակական և արտադրական» «հիդրոտեխնիկական» և «էներգետիկ»
4	«Բնակելի հասարակական և արտադրական » «հիդրոտեխնիկական» և «էներգետիկ»

3. Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 4.3 կետի «ե» ենթակետի համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ների) պատճենը:

4. Ընկերությունը հայտի N 1 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու դիմումով, հայտնել և հավաստել է, որ ունի «ԱՄ-ԲԸՀԱԾՁԲ-17/01» ծածկագրով հայտարարված բանակցային ընթացակարգի հրավերով նախատեսված լիցենզիա/ներ/: Պատճենը կցվում է «Տեխնիկական չափորոշիչ» բաժնում:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.05.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Մեծ հիմք» Ա/Կ-ն, իսկ 2-րդ չափաբաժնի մասով Ընկերության հայտը մերժվել է՝ այն հիմնավորմամբ, որ վերջինս քաղաքաշինության բնագավառում տրանսպորտային լիցենզիա չունի:

6. Պատվիրատուն 14.06.2017թ. թիվ 26348-17 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնով պահանջվել է, որ մասնակիցը պետք է ունենա նաև տրանսպորտային լիցենզիա, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մեծ հիմք» Ա/Կ-ն, մինչդեռ՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից տրված տեղեկության համաձայն՝ «Մեծ հիմք» Ա/Կ-ն հայտը ներկայացնելու պահի դրությամբ լիցենզավորված է և ունեցել է քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման գործող լիցենզիա՝ ըստ բնակելի, հասարակական և արտադրական, հիդրոտեխնիկական և էներգետիկ ոլորտների:

7. «Մեծ Հիմք» Ա/Կ-ն, մասնակցելով Խորհրդի 27.06.2017թ. ժամը 12:00-ի պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված նիստին, հայտնել է, որ Ընկերությունը, մասնակցելով Ընթացակարգին, չի նկատել այն փաստը, որ Ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնով պահանջվել է տրանսպորտային լիցենզիայի առկայություն, ուստի

գտնում է, որ Պատվիրատուն, մերժելով Ընկերության հայտը՝ թիվ 2-րդ չափաբաժնի մասով, գործել է իրավաչափ:

8. «Արևիկ» ՍՊԸ-ն 13.07.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է, որ www.gnumner.am կայքում 22.06.2017թ. հայտարարություն է հրապարակվել «Մեծ Հիմք» Ա/Կ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԱՄ-2017/25 ծածկագրով պաշտոնական ընթացակարգի մասին և խնդրել է Խորհրդին «Մեծ Հիմք» Ա/Կ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը ուսումնասիրելու ժամանակ հաշվի առնել այն փաստը, որ «Մեծ Հիմք» Ա/Կ-ն կրկին մասնակցել է մեկ այլ ընթացակարգի, մասնավորապես՝ «Երևանի հ. 77 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «77ՀԴ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2017թ. ժամը 11:00-ի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Մեծ Հիմք» Ա/Կ-ն հայտ է ներկայացրել և ճանաչվել է հաղթող մասնակից:

9. Խորհուրդը ստացված տեղեկության իսկությունը ճշտելու նպատակով դիմել է «Երևանի Ռ. Միրոյանի անվան հ 77 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին, խնդրելով հայտնել, արդյոք «77ՀԴ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «Մեծ Հիմք» Ա/Կ-ն հայտ ներկայացրել է, թե՝ ոչ:

10. Խորհրդի հարցմանն ի պատասխան՝ «Երևանի Ռ. Միրոյանի անվան հ 77 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը Խորհրդին է՝ ներկայացրել «77ՀԴ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի գրանցամատյանը, համաձայն որի «77ՀԴ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով 21.06.2017թ. «Մեծ Հիմք» Ա/Կ-ն հայտ է ներկայացրել:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով << ֆինանսների նախարարության 21.06.2017թ. թիվ 03/26-1/11281-17 գրությունը, << Արարատի մարզպետարանի 14.06.2017թ. թիվ 26348-17 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Արևիկ» ՍՊԸ-ի 13.07.2017թ. գրությունը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:***

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով:*** Հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) հայտի ապահովումը.

4) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ), եթե հրավերով նախատեսված է.

5) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի համաձայն՝ ***Մասնակիցը հայտով ներկայացնում է՝***

ա. ***գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում*** նշելով հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. իր կողմից հաստատված հայտարարություններ՝ Օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

գ. գնային առաջարկ,

դ. հայտի ապահովում,

ե. ***սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ների) պատճենը,***

ը. գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության կամ ենթակապալի միջոցով,

թ.համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ***<< գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:***

<< Արարատի մարզպետարանի կարիքների համար «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» աշխատանքերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՄ-ԲԸՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Մեծ հիմք» Ա/Կ-ն:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 1-ին կետը սահմանում է, որ սույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները.

ըստ «Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակում» հետևյալ ոլորտների՝

Չափաբաժինների համարները	Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).
1	2
1	«Բնակելի հասարակական և արտադրական» «հիդրոտեխնիկական» և «էներգետիկ»
2	«Բնակելի հասարակական և արտադրական» «հիդրոտեխնիկական», «էներգետիկ» և ***«տրանսպորտային»***
3	«Բնակելի հասարակական և արտադրական»

	«հիդրոտեխնիկական» և «էներգետիկ»
4	«Բնակելի հասարակական և արտադրական » «հիդրոտեխնիկական» և «էներգետիկ»

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 4.3 կետի «ե» ենթակետի համաձայն՝ ***Մասնակիցը հայտով ներկայացնում է սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ների) պատճենը:***

Ընկերությունը հայտի N 1 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու դիմումով, հայտնել և հավաստել է, որ ունի «ԱՄ-ԲԸՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով հայտարարված բանակցային ընթացակարգի հրավերով նախատեսված լիցենզիա/ներ/: Պատճենը կցվում է «Տեխնիկական չափորոշիչ» բաժնում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.05.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Մեծ հիմք» Ա/Կ-ն, իսկ 2-րդ չափաբաժնի մասով Ընկերության հայտը մերժվել է՝ այն հիմնավորմամբ, որ վերջինս քաղաքաշինության բնագավառում տրանսպորտային լիցենզիա չունի:

Պատվիրատուն 14.06.2017թ. թիվ 26348-17 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնով պահանջվել է, որ մասնակիցը պետք է ունենա նաև տրանսպորտային լիցենզիա, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մեծ հիմք» Ա/Կ-ն, մինչդեռ՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից տրված տեղեկության համաձայն՝ «Մեծ հիմք» Ա/Կ-ն հայտը ներկայացնելու պահի դրությամբ լիցենզավորված է և ունեցել է քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման գործող լիցենզիա՝ ըստ բնակելի, հասարակական և արտադրական, հիդրոտեխնիկական և էներգետիկ ոլորտների:

«Մեծ Հիմք» Ա/Կ-ն, մասնակցելով Խորհրդի 27.06.2017թ. ժամը 12:00-ի պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված նիստին, հայտնել է, որ Ընկերությունը, մասնակցելով Ընթացակարգին, չի նկատել այն փաստը, որ Ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնով պահանջվել է տրանսպորտային լիցենզիայի առկայություն, ուստի

գտնում է, որ Պատվիրատուն, մերժելով Ընկերության հայտը՝ թիվ 2-րդ չափաբաժնի մասով, գործել է իրավաչափ:

«Արևիկ» ՍՊԸ-ն 13.07.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է, որ www.gnumner.am կայքում 22.06.2017թ. հայտարարություն է հրապարակվել «Մեծ Հիմք» Ա/Կ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԱՄ-2017/25 ծածկագրով պաշտոնական ընթացակարգի մասին և խնդրել է Խորհրդին «Մեծ Հիմք» Ա/Կ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը ուսումնասիրելու ժամանակ հաշվի առնել այն փաստը, որ «Մեծ Հիմք» Ա/Կ-ն կրկին մասնակցել է մեկ այլ ընթացակարգի, մասնավորապես՝ «Երևանի հ. 77 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «77ՀԴ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2017թ. ժամը 11:00-ի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Մեծ Հիմք» Ա/Կ-ն հայտ է ներկայացրել և ճանաչվել է հաղթող մասնակից:

Խորհուրդը ստացված տեղեկության իսկությունը ճշտելու նպատակով դիմել է «Երևանի Ռ. Միրոյանի անվան հ 77 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին, խնդրելով հայտնել, արդյոք «77ՀԴ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «Մեծ Հիմք» Ա/Կ-ն հայտ ներկայացրել է, թե՝ ոչ:

Խորհրդի հարցմանն ի պատասխան՝ «Երևանի Ռ. Միրոյանի անվան հ 77 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել «77ՀԴ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի գրանցամատյանը, համաձայն որի «77ՀԴ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով 21.06.2017թ. «Մեծ Հիմք» Ա/Կ-ն հայտ է ներկայացրել:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, Ընթացակարգի թիվ 2-րդ չափաբաժնի մասով, մերժելով «Մեծ Հիմք» Ա/Կ-ի հայտը, գործել է իրավաչափ, քանի որ Ընթացակարգի հրավերի թիվ 2-րդ չափաբաժնով պահանջվել է տրանսպորտային լիցենզիայի առկայություն, մինչդեռ՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից տրված

տեղեկության համաձայն՝ «Մեծ հիմք» Ա/Կ-ն հայտը ներկայացնելու պահի դրությամբ լիցենզավորված է և ունեցել է քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման գործող լիցենզիա՝ ըստ բնակելի, հասարակական և արտադրական, հիդրոտեխնիկական և էներգետիկ ոլորտների:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից հայտի N 1 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու դիմումով, ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված կեղծ տվյալի ներկայացում:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ***հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:***

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին՝ մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Մեծ Հիմք» Ա/Կ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Խորհուրդն արձանագրում է, որ «Մեծ Հիմք» Ա/Կ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը ***28.04.2017թ.*** մասնակցելով ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից կազմակերպված «ԱՄ-ԲԸՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգին, ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում, այնուհետև ***21.06.2017թ.*** կրկին հայտ է ներկայացրել «Երևանի Ռ. Միրոյանի անվան հ 77 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «77ՀԴ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգին:

Կարգի 125-րդ կետի 5-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ***3 տարի ժամկետով***, եթե գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ՝ բացառությամբ սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 21.06.2017թ. թիվ 03/26-1/11281-17 գրությամբ ներկայացված «Մեծ Հիմք» Ա/Կ-ին (ՀՎՀՀ՝ 01201774) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երեք տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ